

րու, քահանաներու, քահանայապետներու, խոստովանողներու և վկաներու, զինուոր-
ներու և զօրավարներու, կապեալներու և
արձակեալներու մէջ. տկարներու՝ ամուր
ապաստան, ահաւորներու ահարկու, հա-
ւատարմներու ջատագով, անիրաւ դա-
տաւորներու կշտամբիչ: — Այս և ուրիշ
բազմապատիկ շնորհքներու ձիրքին վրայ
հիացած, թէեւ չեմ դանդաղիր մեր նշա-
նաւոր մարդերու առաջնակարգներէն ա-
ռաջինը զինքը խոստովանիլ, (և չեմ կար-
ծեր որ մէկը ասոր անհաւան գոնուի),
բայց կը վախեմ զինքը դնել այս կամ այն
կաճառին մէջ, ու կը խիթամ որ հոս կամ
հոն փնտռած ատենս լուսեղէն աթոռներէն
մէկուն վրայ, Աստուծոյ Հոգին, այն հոգին
որ զօրութեամբ կը գործէր անոր մէջ եր-
կրաւոր կեանքի օրերուն, յափշտակելով
վերացնէ զինքը բարձունք, և հանգչեցնէ
վայրկեան մը, վայրկեան յաւիտենական,
մշտնջենաւոր լեռներէն մէկուն վրայ, մեզ-
մէ անհասանելի: Թողում ուրեմն քեզ ես
ինձմէ, ուր կը կարծեմ, ո՛վ Հայր Հայաս-
տանեայց, հրահոգի հրաբերան այր, նման
հոգեկրիդ եղիայի, որ ելլես վերանաս
միշտ աւելի անմատոյց բարձրութիւններու
վրայ, — որոնք ելած ատենդ կը բարձրա-
նան, յառաջացած ատենդ կ'ընդարձա-
կուին քու ախորժածիդ համեմատ, — ան-
չափ և անսպառ յաւիտենականութեան
մէջ:... Սակայն, կ'աղաչեմ, չըլլայ թէ
մինչեւ վերջ, անդադար բարձրանալով
անսահման ոլորտին մէջ, և աստուածային
սիրոյն գաղտնիքներուն և հրաշալիքներուն
խորերը մխուելով, զմայլեցուցիչ յաւեր-
ժական խորաններուն մէջ ուր միշտ ազատ
է քեզի մուտքը, մոռնաս յանկարծ ստոր-
անկեալ այս վայրը, ուսկից վերացար
այնքան բարձրութեան, ուր աչքերդ բա-
ցուեցան կեանքի լոյսին, միտքդ՝ իմաս-
տութեան, և սիրտդ՝ սիրոյ, ուր որ է քու
առաջին հայրենիքդ, որուն՝ երբեմն փոր-

ձովդ իսկ գիտես պէտքը և կարօտութիւնը:
Նայէ քու բոցեղէն բերքովդ, և ինչպէս
որ տրտմութեան այս հովտիս մէջ միշտ
ուրախ էիր, զուարթացիր հիմակ ալ անոր
վրայ նայելով, և զուարճացուր մեզ կա-
րօտեալներս, և քեզի հետ կապուածներս
անքակ սիրով, զոր վշտաբեր դարերու և
բարքերու երկարութիւնը չկրցան և պիտի
չկարենան մարել: Ոչ թէ ցաւերու և
զրկանքներու կսկիծին համար կը հրապու-
րեմ քեզ հոգեկցիդ և գահակցիդ նմանիլ,
և բոցեղէն կառքիդ բարկաճայթ լիսեռ-
ներէն կայծակներ թօթափել, նման ան-
հազանդ յիսուններու և յիսնապետներու
խումբերուն վրայ. ոչ այդ բանը կը խնդրեն
անոնք՝ որ քեզի նման որդեգրուած են
Յիսուսի հոգիին. — այն, որ թէպէտեւ
Ջերեզեանց անուն և հրաման տուաւ որո-
տալու, բայց ոչ նաեւ երկնքէն կրակ ի-
ջեցնելու ամարդիներու և հիւրամերժներու
վրայ. — այլ կ'աղաչենք արծարծել և
բորբոքել մեր մէջ և մեր շուրջ՝ սառը
հալեցնող հուրը, սրտառուչ հուրը, սիրա-
սնունդ հուրը: Եւ եթէ չհամարձակինք Ե-
ղիշէի պէս կրկին ոգիդ՝ աստուածախ-
րութեան և մարդասիրութեան՝ խնդրել
մեզի լիովին, սփռէ գոնէ հրաշագործ
կրկնոցիդ ծալքերէն ծուէններ, որպէսզի՝
չըլլայ թէ այդ քու կենսատու զօրութիւն-
ներէդ անմասն մնալով՝ կաղան առաջ-
նորդները և առաջնորդեալները այն ազ-
գին՝ ուսկից դու ծագեցար, որու համար
կեանքով ու մահուամբ նահատակուեցար:
որուն եկեղեցիին մէջ տարուէ տարի կը
տօնուիս և կ'օրհնարանուիս, ցեղէ ցեղ
օրհնարանուելիդ, աննման անոր պաշտ-
պաններուն մէջ և յաւիտենական պար-
ձանքդ, զարմանալիդ Սուրբերուն մէջ,
Այր Աստուծոյ, Հայր և Տէր մեր Ղե-
ւորդի:

Հ. Ղ. ԱԼԻՇԱՆ

Թրգ. Հ. ՔԵՐԻՈՒՆՅԱՆ Վ. ԶՐԱՔԵԱՆ

ՎԻՃԻԿԱԿԵԱՆ ՎԱՆՔԵՐ

ՃԱՐՏԱՐԱԳԻՏ մը չեմ և ոչ ալ ճար-
տարապետութենէ կամ անոր բառամթեր-
քէն բան մը կը հասկնամ, բայց քանի կը
կարգամ և զմայլանքով կը դիտեմ Հայաս-
տանի վանքերու կիսաւեր և կամ փլա-
տակուած վիճակի լուսանկարները, և ա-
նոնց վերակառուցուած պատկերները,
իրենց հսկայ կամարներով, գեղեցկատեսիլ
գմբէթներով ու պատուհաններով, կսկիծ
մը սրտիս մէջ, ցաւ մը հոգիս խորը
կ'արթննայ. արդեօք մեր կրկիկեան աշ-
խարհին մէջ, նման շինուածքներ ունեցած
չենք, ինչո՞ւ չենք հանդիպիր անոնց ալ
նկարներուն, փլատակուած կամ վերա-
կանգնուած ձեւերով:

Այս ցաւալի իրական պակասին հա-
մար, կրնանք ըսել թէ գիտական հետա-
զօտութեանց ենթարկուած չեն կրկիկեան
վանքերն ու զդեակները, ինչպէս եղած
են Հայաստանի մէջ, ոչ ալ անոնց փլա-
տակները, քարակոյտներու վերածուած
սիւները՝ և սրբատաշ քարերը քննուած
են: Աներկբայ եմ թէ ճարտարագէտի նուրբ
ու մանրագին ուսումնասիրութիւնները,
պեղումները, օր մը, այս աւերեաց աշ-
խարհին նուրբ ու ճաշակաւոր կառու-
ցուածքներուն յատակագիծերը երեւան
հանելով լոյս աշխարհ պիտի բերեն կի-
րկիկեան ճարտարապետութեան բնորոշիչ
ինքնուրոյն ձեւերը:

Մեր հայ բանասէրներու ու պատմա-
գէտներու կողմէ, դժբախտաբար, կրկիկեան
մոռացութեան տրուած է: Իսկ կրկիկեցի
հայերը, սկսելով իրենց կաթողիկոսներէն
ու մտաւորականներէն, երբեք հետաքր-
քութիւն չեն ունեցած անցեալին մէջ,
տեղագրելու, ծանօթացնելու իրենց շրջա-
նի վանքերը, տաճարները և այլ ազգային

յիշատակարանները, ըլլան նոյն իսկ ա-
նոնք, աւերակուած և հողակոյտերու վե-
րածուած:

Ինչ որ գիտենք կրկիկեան հնութիւն-
ներու մասին, կը պարտինք Եւրոպացի
հնախոյզներու, որոնք թէեւ արժէքաւոր
տեղեկութիւններ կու տան, բայց շատ հա-
րեւանցի ու կցկտուր են. երբեք չեն մտա-
բերած փլատակները հետախուզելու և պե-
ղումներ կատարելու և անոնց ամփոփ նկա-
րագրութիւնը տալու ապագայ սերունդին:

Հայր Ալիշան իր «Սխուան» կոթո-
ղական գործով մասամբ աշխատած է
լրացնել այս պակասը, արտատպելով
հնախոյզներու գիրքերէն՝ հին նկարներ,
տեղագրական ծանօթութիւններ, բայց մեր
խակական վանքերու և զդեակներու նկա-
րագրականը շատ թերի է: Նոյնպէս կը
պակսին որոշ ծանօթութիւններ անոնց
կառուցուածքի ու ճարտարապետական
ձեւերու մասին:

Մենք, քանի մը կարճ տողերու մէջ
պիտի ջանանք ծանօթացնել կրկիկեան
վանքերու ու զդեակներու աւերակները,
որոնց ականատես եղած ենք մեր ճամ-
բորդութիւններու ընթացքին: Նկատի ա-
ռած ենք Մեծի Տանն Կիլիկիոյ ընդարձակ
սահմանները որոնք սերտ առնչութիւն
ունին կեղրոնի իսկական կրկիկեան աշ-
խարհին հետ:

ՍԿԵԻՈՒԱՅԻ ՎԱՆՔԸ. — Այս վանքը հիմ-
նուած է Հեթումեանց Օշին Բ. Իշխանի
կողմէ — հայրը Ներսէս Լամբրոնացիի, մօ-
տաւորապէս 1140 թուականներուն: Վան-
քը կը գտնուի Լամբրոն բերդին — «պան-
ծալի քան զբնաւս հայկական շինից Կի-
լիկիոյ» — ստորոտը. բերդէն գատուած

է ձորով մը: Երկու եկեղեցիներ կը գտնուէին հոն, Ս. Նշան և Ս. Փրկիչ: Աւերակը կը գրաւէ ընդարձակ գետին մը, կը տեսնուին պարիսպներուն հսկայ բարերը, կամարներու, սենեակներու, խուցերու բաժանումներ, որոնք քարակոյտեր են այժմ: Աւերակը՝ վերածուած է մացառուտքի մը, փշոտ թուփերը անանցանելի կը դարձնեն հետաքրքրուողներու պտոյտը: Եղջերիներու անտառի մը փոխակերպուած է այս նշանաւոր վայրը, ուր ուսած են Ներսէս Լամբրոնացի, Գրիգոր, Մխիթար և Գէորգ Սկեւոյցիները, որոնք ծանօթ հեղինակներ են ԺԲ., ԺԳ. դարերուն՝ իրենց մեկնաբանութիւններով ու քարոզագրութեամբ: Հոս կը գտնուին Հեթումեանց դամբարանը: Ոչ մէկ հետախուզական ձեռնարկ կատարուած է աւերակներուն մէջ:

ՅՈՎՀԱՆՈՅ ԱՆԱՊԱՏ ՎԱՆՔ. — Վանքը կուսանոց ալ կը կոչուի. Ներսէս Լամբրոնացիի մայրը՝ Շահանգուխտ, կենդանութեանը, իր աղջկան Տալիդային հետ հոս կ'առանձնանար ու կը ճգնէր: Իր մահէն յետոյ վանքի վերածուած է այս կուսանոցը:

Անպատ վանքը կը գտնուի Սկեւոյ վանքին հիւսիսային կողմը, Տաւրոս լեռան լանջին վրայ: «Աստուածաբնակ Տաճարին Աստուածածնի և Ս. Փրկիչ յանապատին Սրմէնի, որ հուպ կայ յարեւելից անմատոյց ամրոցին Լամբրոնի, այն որ երեւելի ճոխութեամբ նստի ի գլուխն Տաւրոսի, յառաջնում գահաւանդի ահաւոր լերինն Տաւրոսի»:

Վանքին եղած տեղը կը կոչուի «Արմէնի Լեռ». աւերակը բաւական տարածուն է, խոշոր քարերու կոյտեր իրարու քով զիգուած: Տեղ տեղ կարելի է որոշել սիւններու պատուանդաններ, աղեղնաւոր կամարներու հետքեր: Հոս ալ, ոչ մէկ խուզարկութիւն կատարուած է:

ՍԱՂԻՐՈՒԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՎԱՆՔ. — Այս վանքը, իր անմատչելի դիրքին շնոր-

հիւ, կիլիկեան վանքերու մէջ առանձնաշատուկ տեղ մը ունի. Սկեւոյ վանքէն մէկ ու կէս ժամ հեռաւորութեան վրայ կը գտնուի, անդնդախոր ձորի մը մէջ: Ժեռակրայ-Կիւղնոս գետին աջ ափին վրայ: Վանքին հասնելու համար նեղ արահետ մը մայրիներու ու եղեւիններու անտառներու մէջէն կ'առաջնորդէ քեզ Ժեռակրայ գետին, ձիգ վայրէջքով մը: Պուլղար ու Կուկլակ լեռներուն խորունկ կիրճերուն մէջ բոլորակ տարածութեան մը վրայ շինուած է վանքը իր պարտէզովը: Այժմ այս վայրը կը կոչուի Կեաւուր Պաղչէսի «Ճիհէնէմ Տէրէ» ձորին մէջ: Վանքը՝ վերածուած է աւերակոյտի, տեղ տեղ կը տեսնուին ամուր պատեր ու ցած լիկ կամարներ: Կեռասանին ու ընկուզենին զիրար գրկած կ'ողբան այս սուրբ տեղոյն վրայ: Այս աւերակները Սաղրուի Ս. Աստուածածնին ու Ս. Գէորգայ աւերակներն են ուր «Մայր Մեծի Սրբոյն» — Ներսէս Լամբրոնացի — ըստ հրահանգաց մերձ ի գալ ի Սկեւոյն... ի մէջ լերինս յամալ յացեալ տեղիս... որ կոչէր անապատն բնակութիւն Աստուածածնին Սաղրուի, ի հոսանս գետոյն Ժեռակրայ, և մերձ ի նմին տաճար սրբոյն Գէորգեայ...:

Ներսէս Լամբրոնացիին այս վանքին մէջ կրթութիւնը առած էր իր «գաստիարակ» Յովհաննէս վարդապետէն: Եպիսկոպոսանալէ յետոյ, յաճախ կ'առանձնանար այս անապատին մէջ և կը գրէր իր ճառերն ու մեկնութիւնը:

«Քաղցր էր նմա այն քան զամենայն հեշտութիւն և կոչէր անապատն բնակութեան Աստուածածնին Սաղրուի ի հոսանս գետոյն Ժեռակրայ և մերձ նմին տաճար Սրբոյն Գէորգեայ յորում յանձուկ սենեկի ի զիշերի և ի տուրնջեան անհանգիստ էր յընթերցումն, և միայն կատարէր զգործ սրբոյ պատարագին»¹:

(1) Տես Յիշատակարանը Զեռագրաց, էջ 545.

ՇՈՒՂՐԻ ՎԱՆՔ. — Այս նշանաւոր վանքի տեղոյն մասին տարակարծութիւններ չառ կան: Շուղրի վանքը ու Քեսունի Կարմիր վանքը իրարու հետ կը շփոթուին. մինչ Մ. Արեղեան իր «Հայոց Հին Գրականութեան Պատմութիւն» Բ. հատորին մէջ լաւագոյն լուծումը կու տայ, Շուղր ու Կարմիր վանքերու իրարմէ տարբեր վանքեր ըլլալը հաստատելով: Արդէն մենք այս մասին գրած ենք «Հայագիտական Հասկ» Ա. Տարի գրքին մէջ, որով պէտք չենք տեսներ մանրամասնելու:

Շուղրի վանքը կը գտնուի Անտիոքի—տօնկալա լեռնազաշտին մէջ, Մարաշի և Սիսի մէջտեղուանքը: Մօտը կը գտնուին երկու պզտիկ գիւղեր եւս «Ֆէնք» ու «Անապատ» անունով. իսկ Շուղր գիւղը որ մինչեւ հիմա ալ նոյն անուանակոչութիւնը ունի, լեռներու մէջ պարփակուած է: Չահան գետը մօտէն կ'անցնի: Շնորհալին կը գրէ.

«Ի վայելուչ յայն վայր եկեալ... ի Սեաւ մըթին լեռնն անուանեալ: Ի յանապատ իմն բնակեալ, ի մէջ լերանց Շուղր անուանեալ»:

Շուղր գիւղին միջնաբերդակին վրայ շինուած է այս հռչակաւոր վանքը: Մինչեւ ցարդ կը տեսնուին խորանին կիսաբերդակ կամարները և վրայի տանիքէն մաս մը: Բլրակին շուրջն ու ստորոտը կը գրտնուին բազմաթիւ հիւրանոցներ, աւերակ վիճակի մէջ:

«Գառնեցի Յովհաննէս վարդապետ 1849 թ. աշխատեցաւ շէնցնել այս վանքը ու բաւական ալ զրամ ծախսեց իր քսակէն, սակայն չյաջողեցաւ, որովհետեւ ոչ Սիսի Միքայէլ կաթողիկոսը, և ոչ ալ Պուլսոյ Պատրիարքարանը օգնեցին իրեն»²:

Այս վանքին մէջ կրթուած են Գրիգոր Ապրեալատ և Ներսէս Շնորհալի Հայրապետները. նոյնպէս Փոքր Շնորհալի կոչուած միւս վարդապետները:

(2) Տես ՄԱՐԱՇ պատմագիրքը:

Վկայասէր ու Բարսեղ կաթողիկոսներու օթեւանն էր: Վկայասէր, յաճախ այս վանքին մէջ առանձնացած կը պարապէր իր թարգմանութիւններովը: Այս երկու կաթողիկոսներուն գերեզմանները Շուղր վանքի շրջափակին մէջ կը գտնուին:

Հնախուզական ոչ մէկ պեղում կատարուած է հոս:

ՄԵԾԻՍԱՐ ԵՒ ԱՐԵՎՆԻ ՎԱՆՔԵՐԸ. — Ըստ Աւիշանի, Մեծքարը կը գտնուի «Արեւմտից Բերդուսի և յեւից Զահան գետոյ նշանակի Մեծ քարայր մի ընդ մէջ Զահանի վիճակացս և Սոյո ու Անուարգայ»: Բերդուսի և Զահան գետի արեւմուտքը՝ կը գտնուի Արեղի հայկական գիւղախումբերը, որոնց արեւմտեան կողերուն վրայ, ձորին մէջ կայ հսկայ քարայր մը. քարայրին բացուածքին հարաւային ժեռուտ գետին վրայ կը տեսնուին աւերակուած շէնքեր: Այս աւերակ շէնքերն են որ Մեծքար վանքը կը կազմեն: Անուարգայի վկայութեանը համեմատ, այս քարայրին մէջ թաղուած են երեք յայտնի յոյն մարտիրոսներ:

«Եղին մեծաւ պատուով ի մեծ այլն որ է մեծքար ի պատուական տապանս»: Կիլիկեան յայտնի վանքերէն մէկն էր «Մեծքար» որուն Առաջնորդն «Աստուածատուր Եպիսկոպոսն Մեծքրուն» ներկայ էր Լեւոնի թագադրութեան հանդիսին. նոյնպէս հոս թաղուած է «Յաղագս անհանգիստ բարուց իւրոյ»՝ Մլին քաջ իշխանը իր սաղաւարտով ու թուրովը: Լեւոն Բ. թագաւորը «տուն կարգեաց վարդապետաց վասն վարժելոյ զմանկունս ի սուրբ ուխտն Մեծքար կոչեցեալ»: Որով 1272 թ. դպրեմանքի վերածուած էր այս յայտնի վանքը:

Վկայասէր յաճախ այցելած է ու բնակած այս վանքին մէջ:

Ոչ մէկ պեղում կատարուած է, ու աւերակները խորունկ բռնի մէջ են:

ԱՅԳԵԿԻ ՎԱՆՔ. — Կիլիկեան փառքերէն

մէկն է վարդան Այգեկցին. ծանօթ իր առականերով ու բանաստեղծական քարոզչներովը: Ուսած է Արքակաղնի վանքին մէջ: Բնակութեամբ յանդուգն և չարը խարազանող մէկը ըլլալուն, շրջած է աստանդական Տըքոյ գաւառի զանազան վանքերու ու միայնակեացներու մօտ, և վերջապէս հաստատուած է Այգեկ վանքը:

Այգեկ վանքը շինուած է 1166 թ. Մարաշի արեւմուտքը, Տօնկալա շրջանին մէջ. արդի Եէնիճէ գալէ—Մուճուզտէրէսի կոչուած տեղը:

Այգեկ վանքին տեղը հիմա զրաւուած է Քափուշին ֆրէշներու կողմէ և կառուցուած է երկու հսկայ վանքեր ընդարձակ այգեհատաններով, պարտէզներով. բայց դեռ նշմարելի են այգեհատանի մը մէջ փլատակուած շէնքերու աւերակներ, որոնք կը կարծեմ ըլլան բուն իսկ Այգեկի վանքին հնութիւնները: Պրանք ֆրէշները թէ և իրենց վանքին շինութեանը համար գործածած են անոր սրբատաշ քարերը, բայց դեռ հաւանականութիւն կայ որ պեղումները կարենան նորութիւններ երեւան բերել, այս մեր անուանի վանքի ճարտարապետութեան մասին:

Աւելորդ չ'ըլլար կը կարծենք այս նշանաւոր առակախօսին վարդան Այգեկցիի երկու առակները հոս արտագրել.

Ա. — Գայլուն խրատ տային և աւել տարան կարդային թէ ալ ոչխար և պախրէ մի խեղդեր: Եւ ասէ գայլն, շտապէ ու շուտ կարգայ զաւետարանդ, զի գեհն (ոչխարի հօտ) անցաւ ընդ սարն:

Յուցանէ թէ այսպէս են որդիք մարդկան, որ ոչ լսեն խրատու աւետարանին, այլ միտք նոցա ի չարութեան և յափշտակութեան են, որպէս զգայլն գայն:

Բ. — Զի կին որ հանէ ի բնական կերպէն զոր ստեղծ արարիչն զպատկերս իւր, և շինէ դեղօք զպատկերն և զաչան, նայ ոչ տեսանէ զլոյս խաչին յաւուրն մեծ:

ՔԱՂԱՔՆ ՈՐ ԿՈՉԻ ՀՈՆԻ. — Հոնի քաղաքը

կը գտնուի Զահան գաւառին մէջ: Աւարտութեան հինգ ժամ հեռութեամբ վրայ դէպի հիւսիս «Խուրման Գալէ» ի ստորոտը: Հոնի մէջ մենք ունեցանք երկու կաթողիկոսներ, Պետրոս Գետադարձի քրդերն Սարգիս կաթողիկոսը, և Թէոդորոս Ալախօսիկ կաթողիկոսը: Այս երկու կաթողիկոսները իրարու յաջորդելով մօտաւորապէս տասնհինգ տարիներ աթոռանիստ կաթողիկոսարան ըրին Հոնին: Որով կը տարուին հաւատարու թէ կաթողիկոսական դիրքին վայել վանք մը շինած ըլլան այս քաղաքին մէջ, նա մանաւանդ երբ Սարգիս կաթողիկոսի պէս մեծահարուստ մէկն է այդ կաթողիկոսներէն մէկը:

Հոնին այժմ փոքր քրդաբնակ գիւղ մըն է, Եւրփուզ հայկական գիւղաքաղաքէն հազիւ երեք քառորդ ժամ հեռութեամբ մը վրայ: Գիւղին մէջ ուշըջակաները կը գտնուին աւերակներ, ճերմակ մարմարիոնէ յղկուած քարերը հողին երեսին վրայ կը հանգչին անորոր:

Հնախօսական ոչ մէկ աշխատանք կատարուած է:

* * *

Մենք, ինչպէս նախապէս ըսինք, տուինք մեր ականատեսի տպաւորութիւնները մեզի ծանօթ վանքերուն, և ըրինք անոնց տեղագրականը: Դեռ ունինք կիլիկեան նշանաւոր այլ վանքեր՝ որոնք նոյնպէս կը կարօտին հետախուզական քննութիւններու: Այս վանքերու մէջ նշանաւորներն են Ակներ, Արքակաղնի, Գրազարկ, Խորին, Մաշկեւոր և դեռ ուրիշներ, որոնց մասին խօսելու առիթը պիտի ունենանք, նոյնպէս բերդերու ու ամրոցներու մասին և հայկական արձանագրութեանց, որոնք կը գտնուին Կիլիկիոյ մէջ:

ՏՈՔԹ. Յ. ՏԵՐ ԴԱԶԱՐԵԱՆ

Հալէպ

ԿԱՐՄԻՐ ԳԵՏԸ

ԲԺ. Մանուկ խանդակեան հրատարակած է Կարմիր Գետը անունով տրամ մը, որու նիւթը առնուած է 1914—1915ի մեծ եղեռնի դէպքերէն վերապրող երկու հայուհիներու կեանքէն, երկուքն ալ հարկադրուած դոյութիւնին քաշկոտել իրենց ընտանիքի դահիճներու յարկին ներքեւ՝ դիւղի մը միայնութեան մէջ:

Հեղինակը իր տրամի նիւթին չի մօտենար դրական նպատակներով, եւ ոչ ալ փափաքած է արուեստագէտի շարք մը ծայել այդ ցաւատանջ կեանքին տխրորակ դէպքերուն: Սակայն այդ պարզունակ կեանքը իր մեղմութեան մէջ՝ ինչպէս որ կը ներկայանայ այդ գիւղացեան հոգիններուն մէջ, ունի այնպիսի թարմութիւն, ջերմութիւն ու ներքին ոյժ, որ շնորհք ու դեղեցիկութիւն ստացեր է: Գործողութիւնը բնական եւ արագ, խօսակցութիւնը նկարագիր եւ հոգեկան վիճակներ արտայայտող, եւ միշտ աշխոյժ: Բայց ինչ որ այդ բոլորին մէջ աւելի կ'ազդէ մեր վրայ, ու տրամին կու տայ թափանցող յուզականութիւն մը եւ տեսակ մը մեծութիւն, ցեղին հրայրքն է, ցեղին սէրը՝ որով բոցավառուած են այդ միամիտ հայուհիները, եւ ատ է որ իրենց եղբարախտ դոյութեան դեռ իմաստ մը կու տայ: Ցեղին հրայրքը՝ որ միայն առհաւութիւն կամ միս ու ոսկոր չէ, այլ միտք ու սիրտ է, հոգի է՝ յաւիտենական ըլլալու համար: Կը խորհիմ թէ հեղինակը երկար տարիներ կրած պիտի ըլլայ իր մէջ այդ միեւնոյն հոգին՝ իր հայրենապուրկի կեանքի ընթացքին՝ իրր զերազոյն իրականութիւն մը:

Նաղէ՛ հայուհիներէն մէկը, բարեսիրտ, հանդարտաբարոյ ու հեղաճամբոյր է,

այլեւս համակամ նաեւ իր վիճակին: Սակայն, երբ բռնի իրեն տիրանալ կը փորձեն, կը դառնայ ամենի ու սպաքարող, եւ ուժգնօրէն կը դիմադրաւէ՝ զօրացած իր ցեղային բարոյական կորովով:

Հուրիկ՝ աւելի տարէց, դիտակից է նաեւ իր ողբալի վիճակին, բայց իր մէջ թաքուն ցեղային ոյժը՝ միշտ լարուած եւ պոռթկալու վիճակի մէջ, յարմար ժամանակի կը սպասէ յայտնուելու: Իր դէնքը խենթութիւնն է, ու յիմարի դիմակին տակ ամէն տեսակ ճշմարտութիւն աներկիւղ կը յայտնէ իր դահիճներուն՝ առանց վնասելու անձին. հուսկ կը յաջողի հասնիլ իր նպատակին՝ մահացնելով ամենամեծ դահիճը:

Հուրիկ անշուշտ Հայ ողին չ'անճաւորեր, բայց կը պատկերացնէ ազատազրկուած Ողին, որ մինչեւ իսկ խենթութեան դիմակին տակ համբերութեամբ կը կրէ նուաստացուցիչ վիճակի մը բովանդակ դառնութիւնը, հուսկ կարենալու համար իր զաւաճարականը իրականացնել:

Հայ ցեղին յաւերժանալու ոյժն է՝ մինչեւ իսկ իր տկար ու համեստ դաւակներուն մէջ:

Գուցէ հեղինակը այս տրամը յօրինելով խորհած ըլլայ, որ եթէ Հայը Վեհաժողովներու եւ Ազգերու Ընկերութեանց փոխանակ դիւանագէտի՝ ներկայանար խենթութեան դիմակին ներքեւ, հաւանօրէն աւելի բան մը ձեռք ձգած ըլլար:

Հ. Կ. Ք.

ՄԱՆՈՒԿ ԽԱՆԴԱԿԵԱՆ. — Կարմիր Գետը. տրամ երեք արարով. — մեր օրերուն. — Վենետիկ, Միլիթարեան տպ., 1952: